

ՓՈՐԹՈՒԿԱԼ - ՀԻԶՊՈՆ

«ՀԱՅԵՐԸ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԵՄԸ» ՅՈՒՅԱՀԱՆԴԻՍ ՆՈԽԻՐՈՒԱԾ ՍԱՂԻՄԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ «ԿԻՒՊԵՆԿԵԱՆ» ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻՆ

2023 թուականին Փարիզի մէջ ի յայս եկած երուսաղէմի «Կիւլպէնկեան» մատենդարանի կառուցման վերաբերող արխիւները մեկնակէտը հանգիստացան ցուցահանդէսի մը, որ կ'անդրադառնայ հայերու եւ երուսաղէմի միջեւ եղած սերտ կապին, ինչպէս նաև Գալուստ Շարգիս Կիւլպէնկեանի Սուրբ քաղաքին հետ անձնական կապին:

Կիզպոնի Հայկական համայնքներու փարշտիւնը եւ «Կիւլպէնկեան» արտեստի գրադարանը եւ Արիիւը միասնարար կազմակերպած են «Հայերը եւ երուսաղէմը» խորագիրով ցուցահանդէս մը, որ կը ներկայացնէ սփիւրքի առաջին եւ ամենահին հայկական համայնքի հագարածնայ պատմութիւնը: Երուսաղէմի հայկական թագամասը Հին քաղաքի շրու թագամասերէն մէկն է անգույքական կրօնական եւ մշակութային ժառանգութեան տունը:

Ցուցահանդէսին ներկայացուած է նորայաց փաստաթուղթերէն ընտրանի մը՝ Կիւլպէնկեանի եւ ժամանակի պատրիարքներու նամակա-



Դպրուստ Մարգիս Կիւլպէնկեան մշտապէս ամուր հոգեւոր կապ ունեցած է Սուրբ քաղաքին հետ և զգալի բարեսիրական ծրագրեր իրագործած է Սուրբ Աթոռէն ներա, մինչեւ իսկ իր ծնողներու Մարգիս եւ Տիրունի Կիւլպէնկեանի յիշատակին կառուցած է «Կիւլպէնկեան» մատենադարանը: «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութիւնը կը շարունակէ իր հիմնագրին աւանդութիւնը՝ աջակցելով երուսաղէմի «Կիւլպէնկեան» մատենադարանին եւ Հայոց պատրիարքութեան:



Ցուցահանդէսի բացումը տեղի ունեցաւ 2024 Յունիսի 20-ին Կիզպոնի պիտի շարունակուի մինչեւ Սեպտեմբեր 22, «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան Արուեստի գրադարանի «Աթրիում»-ին մէջ: ■

Պրութեանց, եկեղեցւոյ կրօնական իրեր, երուսաղէմէն փոխառուած հազարիւա եւ եղակի յախճապահեայ կտորներ, ինչպէս նաև երուսաղէմի Հայոց պատրիարքութենէն փոխառուած Սրբոց Յակոբեանց մայր տաճարի՝ Սուրբ Գյուստի մատուան 18-րդ դարու ասեղնագործ վարագոյր մը նախիցեւանէն, որ Կիզպոն փոխադրեց եւ ցուցահանդէսի բացման արարողութեան ներկայ գանուեցաւ երուսաղէմի Հայոց պատրիարքութեան «Հելէն եւ կտուարտ Մարտիկեան թանգարան»-ի տեսուչ՝ Արշակ արդյ Ղազարիան: